## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԵՆԻԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6 -Ա

19 մարտի 2020 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԵՆԻԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ << ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ >> ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6 - ի << ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին >> թիվ 1708 –Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բենիամին համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Շիրակի մարզի Բենիամին համայնքի << ներհամայնքային ճանապարհի ասֆալտապատում >> սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել որ՝

1) Ծրագրի արժեքը կազմում է 30000000 ( երեսուն միլիոն ) ՀՀ դրամ , որից 13500000 ( տասներեք միլիոն հինգ հարյուր հազար ) ՀՀ դրամ համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը՝ Բենիամինի համայնքի 2020 թվականի բյուջեի 4-5-1 գործառնական դասակարգման 5121 << Տրանսպորտային սարքավորումներ >> տնտեսագիտական դասակարգման հոդվածից.

2) Ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականցնում է Բենիամին համայնքի ղեկավարը :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԵՆԻԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՝ ԿՈՂՄ ( 4 ) ԴԵՄ ( 0 ) ՁԵՌ ( 0 )

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՄԻՇԱ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԵՆԻԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԱՆՏՈՆՅԱՆ

19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆ

ԳՅՈՒՂ ԲԵՆԻԱՄԻՆ